«Խոսքի ազատության սահմանափակումը և այդ համատեքստում լրագրողների նկատմամբ ճնշումները»

Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Խոսքի ազատությունը մարդու հիմնարար իրավունքներից է,այն այն եզակի ազատություններից է, որն իրագործվում է ոչ միայն մարդու ներքին զգացողության, այլև հասարակության վրա անմիջական ազդեցությամբ :

Խոսքի ազատությունը համարվում է ժողովրդավարական հասարակության անկյունաքարերից: Այն երաշխավորված է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ:

ՀՀ օրենսդրությունը յուրաքանչյուր անձի համար պաշտպանում է ցանկացած տեսակի տեղեկատվություն կամ գաղափար փնտրելու, ստանալու կամ տարածելու իրավունքը՝ անձի ընտրությամբ ցանկացած լրատվամիջոցի, ինչպես նաև՝ համացանցի և թվային տեխնոլոգիաների միջոցով: Այդուհանդերձ կարող ենք ասել, որ խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ, այն նաև կարող է որոշ դեպքերում սահմանափակվել: Սահմանափակումները կարող են իրավաչափ լինել միայն այն դեպքում, երբ իրականացվում են հստակ իրավական հիմքի վրա և ծառայում են լեգիտիմ նպատակներին: Ցանկացած սահմանափակում պետք է խիստ վերահսկվի՝ կանխելու համար քաղաքական կամ այլ շահերից բխող չարաշահումները: Իրավական պետությունում խոսքի ազատության պաշտպանությունը ոչ միայն իրավական, այլև մշակութային ու հանրային գիտակցության հարց է:

Խոսքի ազատության իրավունքի իրացման հարթակ է լրատվամիջոցների գործունեությունը: Լրագրողները հաճախ ենթարկվում են բռնի ուժի կիրառման, քաղաքական հետապնդման և դատարաններում անհիմն դատական հայցերի:

Վերջին տարիների ընթացքում համացանցային ակտիվ գործունեություն ծավալող լրատվամիջոցներից անընդհատ ստացվում են տեղեկություններ՝ լրագրողների խոսքի ազատության իրավունքի ոտնահարման, լրագրողներին բերման ենթարկելու և անձնական իրավունքների ոտնահարման մասին:

2025թ. 1-ին եռամսյակի ընթացքում արձանագրվել է լրագրողների ու լրատվամիջոցների իրավունքների տարատեսակ խախտումների 56 դեպք: Դրանցից 2-ը ֆիզիկական բռնությունների, 25-ը տարբեր ճնշումների, 29-ը՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումների դեպքեր են:

2025 թվականի առաջին եռամսյակին անցկացված մշտադիտարկման տվյալների համաձայն՝ ԶԼՄ-ների ու լրագրողների հանդեպ տարաբնույթ ճնշումներն առավելապես

իրականացվել են իշխանության ներկայացուցիչների կողմից՝ 25 դեպքից 18-ում: Իշխանության ներկայացուցիչները գերակշռում են նաև ընդդեմ լրագրողների և լրատվամիջոցների հայցերով դատարան դիմողների շրջանում:[1]

Առավել վտանգավոր իրավիճակ է ստեղծվում, երբ իշխանության մարմինները՝ հատկապես ուժային կառույցները, առնչվում են լրագրողների դեմ ուժի անհամաչափ կիրառման կամ խոչընդոտման դեպքերի , սակայն իրավական պատասխանատվության չեն ենթարկվում, դա խաթարում է վստահությունը, թե՛ արդարադատության, թե՛ պետության հանդեպ: Վերոնշյալը դիտարկվում ենք իրավական պետության լիարժեքության խոչընդոտ:

Հայաստանում խոսքի ազատության ընկալվող մակարդակը 2024 թվականին դրությամբ եղել է բարձր՝ 2023 թվականի համեմատ էական փոփոխություն չարձանագրելով: Այնուամենայնիվ, 2023 թվականից ի վեր առցանց տիրույթում խոսքի ազատության ընկալման անկում է գրանցվել:[2]

ԶԼՄ-ի գործունեությունը խոսքի ազատության իրավունքի գործնական դրսևորումներից է,և իզուր չէ, որ ՀՀ օրենսդրությունը նախատեսել է պատասխանատվություն՝ լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտման համար:

Անթույլատրելի ենք համարում հատկապես, երբ բռնությունը կին լրագրողների նկատմամբ է կիրառվում, այդ նվաստացնող վերաբերմունքը անընդունելի է թե՛ քաղաքական կուլտուրայից, և թե մարդկային տեսանկյունից:[3]

Հավելենք, որ ԶԼՄ-ի գործունեության, լրագրողների նկատմամբ ճնշումները, տեղեկատվության մատչելիության անհիմն սահմանափակումները, ինչպես նաև նրանց նկատմամբ ակնհայտ բռնությունները թողնում են ստվերի տակ Սահմնադրությամբ ամրագրված իրավական և ժողովրդավարական պետություն հասկացությունները

«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների
պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ,
Սյունիքի տարածաշրջանային
մասնաճյուղի իրավաբան՝ Լիլիթ Հայրապետյան
06. 03. 2026թ

---

[1] «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ի իրավունքների 2025թ.-ի 1-ին եռամսյակի խախտումների մասին» զեկույց:

[2] «Խոսքի ազատությունն ու մեդիայի սպառումը Հայաստանում» հետազոտություն https://internews.org/wp-content/uploads/2024/09/2024-%D4%BD%D5%B8%D5%BD%D6%84%D5%AB-%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%B4%D5%A5%D5%A4%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB-%D5%BD%D5%BA%D5%A1%D5%BC%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-26%E2%80%A409%E2%80%A42024.pdf:

[3] https://newsarmenia.am/am/news/armenia/skandal-hetaqnnogh-lragrogh-lilit-aghekyani-shurj-pastabane-haytnum-e-khoshtangman-masin-ngnits-meknabanel-en/